

գեղարվեստական մտքի արդյունք են, ուստի և՛ պատմագրության և գրականության փաստ» (ընդգծումները՝ բնագրում–Ա.Ն.)¹²:

Մեր կարծիքով՝ Բախչինյանն ընդհանուր առմամբ իրավացի է, իսկ Աբեղյանն այս խնդրի շուրջ իր դատողություններում նաև որոշակի հակասություններ է երևանում: Նախ՝ ժամանակակիցների բազմաթիվ վկայություններ փաստում են, որ Դավրիժեցու պատմագրքի գործառնականությունը պայմանավորված է եղել ամենից առաջ նրա գրական-գեղարվեստական յուրահատկություններով, այն եղել է ընթերցանության սիրված գիրք: Մյուս կողմից՝ Աբեղյանն ինքն է Դավրիժեցուն դասում «գրականություն նորոգողների» շարքում, բացի այդ՝ վկայաբերում նրա աշխատության այնպիսի արժանիքներ ու ներբերում հատվածներ, որոնք զուտ գրական իրողություններ են: «Այսպիսի նկարագիրներ (նկատի ունի ջուղահայերի բռնի գաղթի տեսարանը–Ա.Ն.) մեր պատմությանց մեջ քիչ կատահենք Եղիշեի ժամանակից ի վեր»¹³: Ավելորդ է նշել, որ Եղիշեի հետ զուգադրումն իսկ գեղարվեստականության ցուցիչ է: Կամ՝ մեկ այլ առիթով էլ գրում է. «Խորենացու հայրենասիրությամբ, բայց և առանց Խորենացու ճարտասանության, պարզ ու բնական, Խորենացուց ավելի սրտառուչ է ողբում յուր հայրենիքը... **...որից ավելի գեղեցիկ չէր կարող ոչ մի իրեն ժամանակակից բանաստեղծ ողբալ**» (ընդգծումը մերն է–Ա.Ն.)¹⁴: Եվ միայն զարմանալ կարելի է հետևյալ եզրահանգմամբ. «Այսպիսի դեպքերում, անշուշտ, կարելի չէ խոսել Առաքել պատմագրի գրվածքի գեղարվեստականության մասին, գրական արժեքի մասին: Նրա ոճը միայն կենդանի է, որովհետև զգացմունքով գրված է...»¹⁵:

¹² **Յենրիկ Բախչինյան**, XVII–XVIII դարերի հայ գրականությունը, Երևան, 1999, էջ 111:

¹³ **Սանուկ Աբեղյան**, Յայոց հին գրականության պատմություն, գիրք երկրորդ, էջ 446:

¹⁴ Նույն տեղում, էջ 448:

¹⁵ Նույն տեղում, էջ 453: